27. ԿԸԼՕ̈ԽԸ ՆԱՆ ՍԸԵՐՏԸ

Ժուկավ ժամանակավ մին շենում մին պառավ մարթ ար կենում, էտ մարթը մին կնեգյ, էրկու խոխա օներ։ Էտ պըռավված մարթը ամո̈ն օր քյընո̈ւմ ար ծըմակը փա̈դ անըմ, տանըմ բազար, ծախըմ ըտրանավ մին կերպ ապրըմ ին։

Մին դո̈նըմ էլհա քյընո̈ւմ ա ծըմակը, կացինը հանըմ ա, թա ծառը կըտրի, մին էլ ա տըեսնում ծառին փըշական մին ղա̈շա̈նգյ ղուշ տո̈ւս թըռավ։

Էտ մարթը էտ ղուշին հետան ա ընգնում, թա փըռնի, տանի տոն, խըխորցը տա, ուրխանան, ամմա կարըմ չի։ Վերշը շատ չըր-չարվելանը եաը էտ ղուշը փըռնում ա, պերում տոն։ Խոխերքը ըտրանավ հաղ ըն անըմ, սոված ինիլը մըտընեռան քըցըմ։

Կընեգյը մարթին իրեսը նըյեր խոսըմ ա, ասըմ. — Ա՛ մարթ, էտ խե՞ փա̈դ չըս ըրալ, ընղալ ըս ղուշին քըմական, խըխորցը սոված թողալ։

Մարթն ասըմ ա. — Վեչինչ, թող խոխերքը հաղ անին։

Էտ մարթը, էտ ղուշին հետի մին ղո̈ւփա̈ղա̈ յա շինըմ, ղուշը տընո̈ւմ մըեչին։

Շատ ա անց կըենում, թա խըեգյ, էտ ղուշը ըսկըսում ա ծո̈ւ ածելը։ Ծո̈ւն վեչ թա իժանանոց ա ինըմ, այլ ինըմ ա թինգյանոց, պըռըլյանդի։ Ամմա էտ պառավ մարթը հի՞նչ ա գյո̈ւդո̈ւմ, պըռըլ-յանդը հի՞նչ ա։

Ցոր ա օնըմ, տանըմ բազար, թա ծախի։ Բըզարըմը ըսկըսըմ ա կանչիլը. — Ա՛յ լավ ծո̈ւ, ա՛յ լա̈վ թա̈զա̈ ծո̈ւ։

Մին առըտուրական կյամ ա հըրցընըմ։ — Քանի՛ յըս ծախըմ էտ ծո̈ւն։— Համ հըրցընըմ ա, համ էտ ծո̈ւն տընդըղըմ։

Էտ մարթն ասըմ ա. — Հիշքա՞ն կտաս։

— Հենգյ հազար մանեթ, օղըմ ըս ծախի, օղըմ չըս ծախիլ միր։

— Հի՞նչ ա, ինձանավ մազաղ ը՞ս անը՛մ, դե լա̈վ տընազ մի տալ...

— Օխտը հազար, իվիլ էլ տալ չը՛մ։

Էտ մարթը լափ մընըմ ա գյունաքար, ծըեռքերը տըղտո̈ղըմ ա, փողը յոր օնըմ, թուշ տոն կյամ, դեհա դեհա, էլ քըմակին եշըմ չի՛։ Հըսնըմ ա տոն, լոխ կընգանը նաղլ անըմ։ Ըտեղ ըտահանք նոր ըն գյո̈ւղում, վեր ծո̈ւն վեչ թա խուտուրու-մուտուրու յա ըլա̈լ, այլ թընգյա̈նոց ա 'իլա̈լ։

Ըտրանա ետը ամուն օր էտ պառավ մարթը մին ծո̈ւ եր կալած տանըմ ա քաղաքը, հա̈մին էտ առըտուրականին տամ, փողը յոր օնըմ, պերըմ տոն, էտ առըտուրականը շատ ա քընենքյ անըմ, թա էտ հի՞նչ պեն ա, հո՞ւնց անի, վըեր էտ ղուշը ո̈ւրա̈ն ծըեռքը քըցի։

Ըտրա հետ'ի տա կյամ ա էտ շենը, հա̈մին էտ պառավ մարթին տոնը քըթենում, ըտրանց սերը-սեկրետը մին պառավ կընդանա գյո̈ւդում, ասըմ. — Ա՛ պառավ, քյըեզ շատ փող կըտամ, հի՞նչ կինի՛, ինձ տանիս ընդրանց տոնը, էտ մարթին կընգանը նհետ մին խըեկ ղըրո̈ւց անիմ։ Էտ պառավ կընեգյը էն մին օրը կանչըմ ա ո̈ւրա̈ն տոնը էտ պառավ մարթին կընգանը ասըմ.

— Ա՛խչի, էլ ըտրանա լա̈վ պե՞ն, մին առըտուրական ա եկալ քղաքական, քյըեզ օղըմ ա, հի՞նչ ըս անըմ էտ պառավ մարթին, տու էլ ընդրան սիրըմ չըս, տու՝ շա̈հիլ, 'ինքը՝ պառավ, հետե ըտրան քյինի՛։

Էտ լոխ ըսելանը ետը պառավը ըտրանց թողըմ ա մինա̈կ, ինքը տանան տուս կյամ։

Էտ վաճառականը էտ կընգանը խելքա տանըմ ա։ Ասըմ ա.
— Ցըես քյըեզ նհետ կըփըսակվիմ, թա̈ք լյհա̈ մին խընթիրք օնիմ կըդարիս։

Էտ կընեգյն ասըմ ա.— Հի՞նչ խընթիրք ա, քյըեզ նման տըղըմարթին հետ'ի հինչ ասիս, կանի՛մ...

Էտ առըտուրականն ասըմ ա. — Էն ղա̈շա̈նգյ ղուշը մորթի, սըերտը նան կըլո̈խը պեր ինձ տո, ուտիմ։—Ասըմ ա պըրծընըմ, մին մըտանի, մին էլ մին բրասլետ տուս օնըմ, տամ էտ կընգանը։

Էտ կընեգյը իտի էլ անըմ ա։ Կյամ ա տոն, տրեսնըմ խոխերքը հաղ ըն անըմ էտ ղուշին նըհետ։

Տա խըխորցը ղըրկըմ ա ծըմակը, թա. — Քյեցեքյ ծըմական տըզզան, մոշ, մըհասուր, տես-տեն հըվըքեցեքյ, թորբան նի ըծեցեքյ, պերեքյ։

Ինքը ղուշը մորթըմ ա, թրեփոըմ, իփըմ, տընըմ ըստոլին, վըեր քյինի էն առըտուրականին կանչի, կյա օտի։ Մարթն էլ էն ա ընում քաղաքըմը ծու ծախելիս։

Մինչև հանգը-հունգը մըթնըմ ա, խոխերքը յետ ըն տրեռնըմ կյամ, տրեսնըմ մարը տանը չի, ղուշն էլ ղաֆազըմը չի, իփած, հըղըրած, էն ա ըստոլին յըրան։ Ըտրանք գյուղում ըն, թա մարը ուրանց հետի յա իփա՞լ։ Մըեծ ախպերը յոր ա օնըմ կըլոխը օտըմ, պուճուր ախպերն էլ սըերտը։ Ուտելանը ետը տուս ըն կյամ, քյընում հաղ անին։

Էտ կընեգյը էտ առըտուրականին նհետ կյամ ա, տրեսնըմ իփած ղուշը կըերած։

Տա կըգնվում ա էտ կընգանը յըրան, ասըմ. — Էս սըհաթես քյինի խըխորցտ ճարի, ըսպանի, ընգրանց փորան ղուշին կըլոխը նան սըերտը տուս կալ, պեր ինձ տո, օտիմ։

Էտ կընեգյը խոսկ ա տամ, վեր իտի կանի։

Վըեր մարթը տոն ա կյամ, կընեգյը կըգնվում ա յրան, մարթին խափըմ, գյըվաքյիս թա՞ ղուշը մորթալ ա, իփալ մարթին հետի, ամմա խոխերքը եկալ ըն, կերալ։

— Դե քյինի, քյինի ընգրանց ճարի, ըսպանի, կըլոխը նան սըերտը հանի պեր, պա՞հ, պա՞հ, պա՞հ, պա՞հ, բա իտի լակուտ կը խրատի՞ն, բա տու մա՞րթ ը՞ս...

Էտ պառավ մարթը վախելան նըհետ, վեր կընեգյը գուզ-գուզ խըխորցը կը սպանի, տուս ա կյամ, քյընում խըխորցը կոշտը, թաքուն լոխ նաղլ անըմ։ Ետավ իրեսներան պաչըմ, ճընապար տընում բիդի զարիբոթուն։

Էտ էրկու ախպերը շատ ըն քյընըմ, թա խըրեգյ ըն քյընըմ, հասնըմ ըն էրկու ճընապարի։ Ըտեղ մին մըեծ քար ա ընըմ, յրան կյրած՝ «Աչ ճընապարը տանըմ ա դիրի ուրխոթուն, ծախը՝ դիրի չըրչարմանքս։

Ըտրանք էրգյան քընենքյ ըն անըմ, թա վեր ճընապարավ քյինին։ Վըերչը մըեծ ախպերը աչ ճընապարավը ա քյընում, պուճուր ախպերը՝ ծախ։

Մինչև քյընիլը մըեծ ախպերը ուրան շուբին լոխ փողերը տամ

ա պուճուր ախպորը, ասըմ. — Եր կալ, յըես աման քըշեր իմ կըլխը-տակաս հինգ հա̈րո̈ւր մանեթ ըմ յոր օնըմ։

Ըտեղ ախպերքը ո̈ւրո̈ւր անա պըժանվըմ ըն։

Մըեծ ախպերը քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ մին երգյիր, մին պառավ կընգա կոշտ ղոնաղ ինըմ։ Ղուշ ըն պըեց թողըմ։ Էտ ղուշը հո̈ւր կըլխի նըստի, ընդըրան էլ թաքավեր պիտի ճոկին։ Ղուշը կյամ ա, նըստում էտ տըղին կըլխին։

Հըվաքված ժողովուրթը օզըմ չի, ասըմ ըն. — Մին էլ պըեց թուղեցիք ղուշը։

Իտի իրեք գո̈նըմ պըեց ըն թողում, էլհա̈ ղուշը կյամ ա էտ տըղին կըլխին կաղնըմ։ Ըտրան էլ թաքավեր ըն ճոկըմ։ Տանըմ ըն թաքավերին թախտին նըստըցնըմ, թա̈քյը տյընըմ կըլխին։

Մըհեկ էլ կյանք պուճուր ախպորան խոսինք։

Պուճուր ախպերը էտ դիրի չըրչարմանքը տանող ճըն ապարավը շատ ա քյընըմ, խրեգյ ա քյընըմ, հըսնում ա մին քաղաքի։ Ծուրա̈ն համար մեծ-մեծ տըներ ա շինում, ըսկըսըմ լա̈վ ապրելը, քանի վըեր աման քըշեր, պըերցին տական հինգ հա̈րո̈ւր մանեթ փող ա յոր օնըմ։

Քաղաքին հըրեաննին մաթ ըն մընում, թա էս ըշտըղա յա էս-քան փողը, էս տըղան վեչ կործ ա անըմ, վեչ մին պըեն, խստի ապրըմ ա։ Հա̈լա̈ էն սուփրան, վեր պենըմ ըն, ամեն լա̈վ-լա̈վ օտելի պենե-րավ լըցնում ար, մին էլ էն գյա̈բա̈ն, վեր իշտեղ օղում ար, տանում ար, մին էլ փափաղը, վեր կլխին ար տինում, ըրվում չար ծըեռք ար պերա՜լ։

Համին էտ քաղաքըմը մին շատ կյեղեցիկ ախճիգյ ա ընո̈ւմ։ Հու վեր օզըմ ար ընդըրան տըեսնա, բիդի հինգ հա̈րո̈ւր մանեթ փող տա։

Մին դո̈նըմ էտ պուճուր ախպերը փող ա յոր օնըմ, վեր քյըն-ի ընդըրան տըեսնա։

Տըեսնալն ըրա̈ստ սիրահարվում ա։ Ընդըրա նհետ մին խիլլա̈ զո̈ւրո̈ւց ա անըմ, կյամ տոն։

Իտի աման օր քյընըմ ա ընդըրա կոշտը, աման դո̈նըմ էլ հինգ հարո̈ւր մանեթ փող տամ։

Էտ ախճիգյը օզըմ ա գյիդա̈, թա էտ փողը ըշտըղա՞ յա։ Էտ երի ատաժը պակա՛ս տըղան լոխ ասըմ ա։ Էտ ախճիգյը հրամման ա տամ, ո̈ւրա̈ն ծառոցը, վեր էտ տըղին մին լա̈վ թակին։ Ծառեքը էնքան թակըմ ըն, վեր էն ղուշին սըերտը կյամ ա պիրա̈նա̈վը եր ընդ-նում։ Էտ ախճիգյը յոր ա օնըմ կոլ տամ։ Էտ ախճիգյը ըտրան սիրում չի, փիս-փիս եշըմ ա, օզըմ ա տո̈ւս քըցիլ տա, ամմա վըեր տըեսնըմ

ա ընդրա ծրեռին սուփրան, էն ղաշանդյ գյաբան սրտրսոտ քրմքը-ծեծաղ ա տամ, տանըմ տոն, նըստրցնըմ։

Էտ տըղան սուփրան հանըմ ա, ասըմ. — Ա՛ սուփրա, քյըզանա կօգիմ ախշարքըմս հինչ լավ օտելի պըեներ կա, տուս պըերիս։ Մին մունուտ չի քաշած, սուփրան լըցնըմ ա ամման շուռա լավ-լավ օտելի պըեներավ։

Էտ վախտը ախճիգյը հրամմայում ա ուրան ծառոցը, վըեր կյան էտ տըղին մին լավ թակին, տուս քըցին։ Իտի էլ անըմ ըն։ Փափաղը, գյաբան, սուփրան ծրեռքան ինքյ ըն օնըմ, մաշկին մին լավ քացի տամ, աքսորըմ մին անհայտ կըղզի։

Էտ կըղզըմը էտ տըղան խիլլա վախտ հիվանդ ա մընըմ, ետ-նան տրես ա քյընըմ, տրեն ա քյընըմ, թա մին տրեղ ճարի, տուս կյա, տրեղ չի ինում։ Ամման օր կյամ ա, ծովին քըշտին նըստում, եշըմ-եշըմ, մին էլ մընըմ մաթալ։

Իտի օխտը տարի էտ անհայտ կըղզըմը ապրըմ ա։ Օխտինջի տարին էտ տըղան մին ծառի թրեգյն տըված էլհա եշըմ ա ծովին, տրեսնըմ վըեր ծովան դիրի ուրան եկին իրեք յըղոնիգյ։

Էտ յըղոնիգյներան լոխճան պուճուրը ասըմ ա. — Էս տըղան հո՞ւնց բիդի էս կըղղուցը տուս կյա։

Մրեծ յըղոնիգյը ասըմ ա. — Վըեր էտ մարթը ուրան թրեգյն տըված ծառին ղաբուղան կըտրի, տըրեխ շինի կյենա, նա կարող ա անց կրենա էս ծովավը։ Ըտրանա գյման էս ծառան վըեր մին մըհակ կըտրի, էտ մըհակին կախարթական զորութուն կինի։

Էտ պուճուր ախպերը լոխ լըսըմ ա, ծառին ղաբուղան տըրեխ ա շինում, կյենըմ, մին մըհակ էլ կըտրըմ, ծովավը անց կրենըմ։ Մին օրվան մեչին էլհա հըսնըմ էն քաղաքը, ըշտրեղ համին էն կյեղեցիկ ախճիգյն ա։

Քյընըմ ա, նի մննըմ էն ըխճըկանը կոշտը։ Վըեր ախճիգյը ընդրան տրեսնըմ ա, ծառոցը հրամմայըմ ա՝ տուս անին։ Ծառեքը յրա յըն պըրծընըմ, թա մին լավ թակին, էտ տըղան մըհակավը յրա յա պըերում ըտրանց, լոխ էլ էշեր ըն տրեռնըմ։

Ախճիգյը վըեր տրեսնըմ ա, ղաչանք ա անըմ, վըեր ծառոցը էլհա մարթ շինի, ամմա էտ տըղան անգուճ չոնըմ, ասըմ ա. — Իմ գյաբաս, սուփրաս, փափաղրս տո, էլհա մարթ շինիմ։

Ախճիգյը վըեր լոխ պըերըմ ա ուրան տամ, էն վախտը տրենակը շուբան հանըմ ա, թա էտ ըխճըկանը ըսպանի։ Ախճիգյը վախըմ ա, վըխելան նհետ պիբանան էն ղուշին սրերտը եր ա ընգնըմ։ Էտ տըղան

յոր ա օնըմ, դաստի կոլ տամ։ Ախճիգյը տրեսնըմ ա, վրեր աման հինչ ծրեռքան ընգալ ա, ռազի յա կրենըմ էտ տըղին նհետ փըսակվի։

Պուճուր ախպերը ըտրան նըստըցնըմ ա գյաբին յրան, ասըմ. — Ա՛ գյաբա, ինձ տար իմ մըեծ ախպորըս կոշտը։ Մին սըհաթանը ետը հըսնըմ ըն մըեծ ախպորը կոշտը։

Ընդրա թաքավերական պալատըմը փըսակվըմ ըն։ Մին լավ հըրսանիք ըն անըմ, իտի էլ հաշտ ապրըմ ըն։

Երգինքան իրեք խընձոր եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ տըռանը տական անշուկ տընողին։